

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Գնահատման և վավերացման գործընթացների պաշտոնական արդյունք (դիպլոմ, հավաստագիր և այլն), ստացված իրավասառմարմնի որոշման հիման վրա, առ այն, որ անձը ձեռք է բերել սահմանված չափորոշիչներին համապատասխան կրթական վերջնարդյունքներ:

Որակավորումների ազգային շրջանակի համարեքստում այդպիսի չափորոշիչներ են մակարդակների նկարագրիչները:

ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը ներառում է 3 մակարդակ, որոնցից յուրաքանչյուրի համար տրվում է գիտելիքի, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ լրակազմը:

ԻՆՉ Է ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ (ՈԱՇ)

Կրթական տարբեր մակարդակների համար սահմանված պահանջներին համապատասխան որակավորումների դասակարգման գործիք, որի նպատակն է փոխկապակցել ազգային որակավորումները և համապատասխանեցնել աշխատաշուկայի և հասարակության պահանջներին՝ դրանք դարձնելով թափանցիկ ու հասկանալի:

Ուղեցույցում ներկայացված են ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի հիմնադրույթները և կարևորությունը գործատուների համար, ինչպես նաև շրջանակի պրակտիկ օգտագործման հնարավորությունները:

ՈԱՇ-ում ներկայացված է որակավորման յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կազմը, որի օգնությամբ գործատուները կարող են տվյալ աշխատանքի համար պահանջվող գործառույթները համադրել ՈԱՇ-ի որակավորումների հետ:



Co-funded by the Tempus Programme of the European Union



ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ Համառոտ ուղեցույց գործատուների համար

3-րդ մակարդակ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

2-րդ մակարդակ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍ

1-ին մակարդակ՝ ԲԱԿԱԼԱՎՐ



ՈԱՇ-Ը ԿՕԳՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ

- ➔ Հստակ պատկերացում կազմել ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների մասին, տեսնել ուսման առաջխաղացման հետագիծը, ինչպես նաև գիտելիքի, կարողությունների և հմտությունների զարգացման դինամիկան՝ մեկ մակարդակից մյուսը:
- ➔ Հասկանալ շրջանավարտի կրթական ձեռքբերումները՝ մասնագիտական պատրաստվածության տեսանկյունից:
- ➔ Ըստ մասնագիտական գործունեության պահանջների՝ որոշել մասնագետից ակնկալվող գիտելիքի, կարողությունների և հմտությունների լրակազմը:
- ➔ Պլանավորել անձնակազմի մասնագիտական զարգացման ծրագրերը (կարճաժամկետ դասընթացներ և վերապատրաստումներ, սեմինարներ, աշխատաժողովներ և այլն):
- ➔ Աշխատանքի ընդունել ոչ միայն ՀՀ-ում, այլև օտարերկրյա ուսումնական հաստատություններում որակավորում ստացած մասնագետների, քանի որ ՀՀ ՈԱՇ-ը համադրելի է Որակավորումների եվրոպական շրջանակին:

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԲԱԿԱԼԱՎՐ (180-240 կրեդիտ)

Բակալավրի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիք և կարողություններ մի շարք ոլորտներում՝ մասնագիտական աշխատանք կատարելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

ՄԱԳԻՍՏՐՈՍ (60-120 կրեդիտ)

Մագիստրոսի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն ոլորտի խոր մասնագիտացված գիտելիք և կարողություններ մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (180 կրեդիտ)

Գիտությունների թեկնածուի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն խոր և համալիր գիտելիք ու հատուկ հետազոտական կարողություններ գիտության կամ մասնագիտական գործունեության մեկ կամ մի քանի փոխհաստվող ոլորտներում՝ գիտելիքն ընդլայնելու և/կամ նոր գիտելիք ստեղծելու համար:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ԳՈՐԾԱՏՈՒՆ ԿԻՐԱՌԵԼ ՈԱՇ-Ը

- ➔ Նախ անհրաժեշտ է սահմանել այն բոլոր գործառնությունները, որոնք անհրաժեշտ են տրված աշխատանքը կատարելու համար:
- ➔ Գործառնությունները սահմանելուց հետո անհրաժեշտ է որոշել դրանց իրականացման համար պահանջվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների լրակազմը:

Ինչպե՞ս համադրել աշխատանքի գործառնությունները և ՈԱՇ-ի նկարագրիչների հետ (օրինակի դիտարկում)

Գործառնություն	ՈԱՇ
Վերլուծել կազմակերպության բյուջեի հնարավորությունները հետագա զարգացման համար	Կարող է վերլուծել և գնահատել մասնագիտական ... ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալներ ... որոշումներ կայացնելու նպատակով (7-րդ մակարդակ):
Նախաձեռնել վաճառքի գործընթաց	Կարող է մասնագիտացման ... ոլորտում ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ և անժանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ... նոր մոտեցումներ (7-րդ մակարդակ):
Մշակել նոր արտադրանքի առաջարկներ	Կարող է ... փայլ նորարարական ու սրբեղծագործական լուծումներ, ինչպես նաև առաջադրել ... արդիական գաղափարներ ու մոտեցումներ (7-րդ մակարդակ):
Ներկայացնել կազմակերպությունը հասարակությանը և գործընկերներին	Կարող է կիրառել մասնագիտական հաղորդակցման միջոցները ... լայն հանրությանը հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումները ... (7-րդ մակարդակ):